# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**19 հոկտեմբերի 2022 թվականի N 421-Ա**

**«ՍԻՍԻԱՆԻ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՀՈՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԽԱԺԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Սիսիանի N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հ. Ալեքսանյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ եմ՝**

«Սիսիանի N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովիկ Ալեքսանյանի առողջական խնդիրների պատճառով՝ նրա անաշխատունակության մեջ գտնվելու ընթացքում, տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Խաժակ Գևորգյանին:

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 3302840382

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** **Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 19

ք. Կապան